462

1. Տե՛ր, ընկածին վեր հանող Տեր,
Տկարին զորացնող Տեր, ինձ գթա՛։
Տե՛ր, կույրերին աչք տվող Տեր,
Հարություն, կյանք տվող Տեր, ինձ գթա՛։
    Քեզնից անջատված՝ մահվան ձորում,
    Մթության մեջ տառապում, տանջվում,
    Բայց կրկին, Հիսո՛ւս, Քեզ եմ դիմում,
    Կենդանացրո՛ւ հոգիս, նորից կյանք տո՛ւր։

2. Տե՛ր, ների՛ր ինձ, օրհնյալ իմ Տեր,
Որ պայծառ այն լույսը Քո լքեցի։
Տե՛ր, առանց Քեզ խավար է, Տե՛ր,
Առանց Քեզ տանջվում եմ, Տե՛ր, ինձ գթա՛։
    Ծագեցրո՛ւ իմ մեջ արևը Քո
    Ու ջերմացրու արդեն սառած հոգիս,
    Բորբոքի՛ր կրկին այն սերը Քո,
    Որ հավիտյան գրկումդ հանգչեմ, Տե՛ր իմ։

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025